

ՏՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՎԱՅՄ. ԳԱԼՈՒՍՏ ՊԵՅ ԿԻՒԼՊԵԼԿՍԱՆԻ
ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ս. Աթոռոյոյ բովանդակ Միաբանու-
թիւնը, ինչպէս նաեւ Ս. Գաղաթիւս ամ-
բողջ Հայութիւնը դառնադին զգածմամբ
սպաւորուեցաւ վսեմ. Գալուստ Գէյ Կիւլ-
պէնկեանի՝ Հայկ. Բարեգործական Ընդհ.-
Միութեան ընտրեալ նախագահի պաշտո-
նէն հրաժարման լուրէն, զոր դժբախտա-
բար հաստատեցին ազգային թերթերն ու
պաշտօնական տեղեկութիւնները:

Այս ընդհանուր վիշտին թարգման
հանդիսանալով, Ս. Գառիբարբ Հայրը
գրեց իրակոյն Ն. Վահուժեան, խնդրելով
որ հաճի յետս կոչել իր հրաժարականը,
որ, ներկայ պարագայից մէջ մանաւանդ,
աղէտ մը միայն պիտի ըլլար ազգայէն
այդ Հաստատութեան համար:

(«Սիւն», 1982, Զ. Յարի, Թուլիս,
Թիւ 6, էջ 191):

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՅՄԱՊԵՏԻ

Հանրածանօթ իրողութիւն է այլեւս
աւետարար այն լուրը, որ հաղորդուած է
Ս. Էլմիածինէն, և որ կը ծանուցանէ թէ
Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան
օր նշանակուած է ներկայ տարւոյ Նոյեմ-
բերի 10ը: Ուրախ ենք որ չենք խաբուած
մեր լաւատեսութեանը մէջ: Տակաւին կը
պակսին մեզի աւելի մանրամասնութիւն-
ներ, բայց կը փափաքինք մտածել թէ ի-
րերը պիտի կատարեն իրենց ընթացքը
միեւնոյն ուղղութեամբ, համաձայն Հայ
Սնկնդեցոյ օրինաց և Հոգեւոյն շարժապե-
տին (Քէնորք Ե. Սուրէնեան, Մ. Խ.) կողմէ
նախագծուած կանոններու:

(«Սիւն», 1982, Զ. Մարի, Թուլիս,
Թիւ 7, էջ 222):

* *

Շարաթ, 30 Յուլիոսի երեկոյեան, Ըն-
ծայարանի արահին մէջ, նախագահու-
թեամբ Ս. Գառիբարբին և ի ներկայու-
թեան Միաբանութեան, կատարուեցաւ
գրական երեկոյթ մը: Եղիազար (Ներկայ

Գահակալը Ս. Աթոռոյոյ) և Յակոբ (Տէր
վիշեան, այժմ Մ. Վրդ. Ի Գալիֆօրնիա)
սարկաւազներ կորդացին իրենց գրած
բանաստեղծութիւնները: Առաջինին նիւթն
էր «Գաղաթիւնը հոգեբանութեան հա-
մար ինչպէս կրնայ ըլլալ աղբիւր տեղե-
կութեանց», երկրորդինը՝ «Ժամացականու-
թեան գլխաւոր գործողութիւնները»: Ա-
րիստակէտ և Հրանդ սարկաւազներ կորդ
դացին իրենց թարգմանած կտորները,
Ժառանգ. սան Արշակ Գալուստեան (այժմ
Շնորհ Պարթ. Կ. Գոլսոյ)՝ Մեծն Տիգրանի
կեանքին վերջին հերթական մէկ դրու-
գիւն վրայ դրած իր շարադրութիւնը: Բա-
լար հռահրը ընդհիլուեցան աշակերտուե-
րու երգերով: Այս երեկոյթը կատարուե-
ցաւ լրմանը առթիւ գպրոցական դասըն-
թացքին երիցագոյն չորս սարկաւազնե-
րուն, որոնք այս կերպով ժամանած կ'ըլ-
լան իրենց քահանայական ձեռնադրու-
թեան նախօրեակին:

Ս. ԹԱՐԻՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԱՆԴՐԱՆԻՔԻ ՀՈՒՆՁՐԸ

Թուլիս 31ի Կիրակի յետ միջօրէին,
Ժառանգաւորաց վարժարանի բակին մէջ,
որ բեմադարդ հանդիսավայրի մը վերած-
ուած էր, երեքդարեան հինաւաւրց մայ-
րիկն տակ, Ս. Գառիբարբի նախագահու-
թեամբ և բովանդակ Միաբանութեան և
խուռներում ժողովուրդի ներկայութեամբ
կատարուեցաւ ամսվերջի դպրոցական
հանդէսը Ս. Աթոռոյոյ Ս. Թարգմանչաց
վարժարանին, ուր կը դաստիարակուին
շուրջ 500 սաներ և սանուհիներ:

Այս տարի, Նախարարութեան բաժինը
տուու իր առաջին հունձքը, չորս մանչ և
եօթ աղջիկ ընթացաւորաներ. — Թագուր
Յովհաննէսեան, Կարապետ Չաղմազեան,
Հրանդ Մարտիրոսեան, Պողոս Էջմէքեան,
Ազատուհի Զաքեան, Աղաւնի Հանեան,
Երանուհի Շէօմէլեան, Մարի Մատուր-
եան, Մերսէտէս Երէցեան, Վարդաւի
Տէօքմէճեան և Վահանոյշ Պետրոսեան:
Մանկապարտէզէն վկայուեցան 35 փոքրեր:

Ս. Գառիբարբը բաժնեց վկայական-
ները և խօսեցաւ ազդու խորատական մը:

(«Սիւն», 1982, Զ. Մարի, Օգոստոս,
Թիւ 8, էջ 256):